# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# ՈՒՍՈՒՄՆԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

Մենք, ներքո ստորագրողներս , մի կողմից Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը /այսուհետև ԿՏՊՔ/ ի դեմս տնօրեն Գ.Գևորգյանի մյուս կողմից

«ՎԱՆԱԿԱՏ» ՍՊԸ

/ձեռնարկության , հաստատության , կազմակերպության անվանումը/

ՏՆՕՐԵՆ Ա. ԵՐԵՄՅԱՆ

/պաշտոն, անուն , ազգանուն /

«Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարերի տեխնիկական շահագործում» մասնագիտության պրակտիկան անցկացնելու վերաբերյալ կնքում ենք սույն պայմանագիրը :

1. Ձեռնարկությունը /հաստատությունը , կազմակերպությունը/ պարտավորվում է

1.1 ԿՏՊՔ-ի կողմից ներկայացված օրացուցային պլանի համապատասխան 40 տեղ հատկացնել ուսանողների ուսումնա-արտադրական պրակտիկան անցկացնելու համար :

1.2 ԿՏՊՔ-ի հետ համաձայնեցված կարգով /պրակտիկայի անցկացման ժամանակացույցին համապատասխան/ իրականացնել ուսանողների աշխատանքային տեղերի շրջափոխու-մը , որպեսզի նրանք հնարավորին չափ ծանոթանան ձեռնարկության /հաստատութ-յան , կազմակերպության / գիտաարտադրական և տնտեսական գործունեությանը:

1.3 Ուսանողների պրակտիկայի ներկայանալը ենթարկել հաշվառման :Ուսանողների կողմից տվյալ ձեռնարկությունում /հաստատությունում , կազմակերպությունում/ սահմանված աշխատանքային ռեժիմի և կանոնների խախտման դեպքի մասին անմիջապես տեղյակ պահել ԿՏՊՔ-ի տնօրինությանը :

1.4 Պրակտիկայի ավարտից հետո յուրաքանչյուր ուսանողի համար տալ բնութագիր , նրա աշխատանքի ու կազմած հաշվետվության , որակի և կարգապահության մասին :

2.ԿՏՊՔ-ն պարտավորվում է

2.1 ուսանողների ուսումնա-արտադրական պրակտիկան սկսելուց մեկ ամիս առաջ ձեռնարկության / հաստատության , կազմակերպության / հետ համաձայնեցնել պրակտիկայի անցկացման ծրագիրն ու ժամանակացույցը :

2.2 Ապահովել ուսանողի կողմից ձեռնարկությունում / հաստատությունում , կազմակերպությունում / սահմանված աշխատանքային ռեժիմի և կարգապահական կանոնների պահպանումը :

2.3 Ձեռնարկության / հաստատության , կազմակերպության / տարածքում ընդհանուր ղեկավարի միջոցով պահպանել անվտանգության տեխնիկայի , հրդեհային անվտանգության և այլ գործող կանոնների պահանջները և կրել պատասխանատվություն դրանց խախտման համար :

2.4. Պրակտիկան սկսելուց ոչ ուշ քան երկու շաբաթ առաջ նամակով ձեռնարկության /հաստատությանը , կազմակերպությանը / ներկայացնել պրակտիկա անցկացնող ուսանողների ցուցակը :

3 .Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պայմանագիրն հայտարարել չեղյալ, եթե մյուս կողմը չկատարի իր ստանձնած պարտականությունները

4. Պայմանագրում տեղ չգտած հարցերը լուծվում են ՀՀ գործող օրենքով:

5. Պայմանագիրը կնքվում է չորս տարի ժամկետով, սկսած **2021** թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 1-ը :

6 .Պայմանագիրը գործում է Ք. Հրազդանում , երկու հավասարազոր օրինակներից, մեկական օրինակ յուրաքանչյուրի համար:

7. Կողմերի իրավաբանական հասցեները և այլ ռեկվիզիտները :

ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ
2301 Ք. ՀՐԱԶԴԱՆ

ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ

ՀԵՌ. 060-27-32-32
Հ/Հ160254503016

ՏՆՕՐԵՆ ____________ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՊՐԱԿՏ. ՂԵԿԱՎԱՐ ---------------Կ. ՍԵՄԻՐՋՅԱ

«--------»------------------------2021թ

« ՎԱՆԱԿԱՏ » ԲԲԸ
Ք.ՀՐԱԶԴԱՆ
ՄԻԿՐՈՇՐՋԱՆ ՓՈՂՈՑ 3/2

Հեռ. **093-41-39-42**

ՏՆՕՐԵՆ ____________ Ա.ԵՐԵՄՅԱՆ

«------------»--------------------------2021թ